ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 24.07.2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆ ԴԱՎԻԹ ՄՈՒՐԱԴԻ ԻՈՆԴԵՄԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ ԿԳ-26126-2-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը (**այսուհետև՝ Խորհուրդ**) ՝ նախագահությամբ Դավիթ Մելքոնյանի, խորհրդի անդամներ՝ Մարինե Ֆարմանյանի, Ցոլակ Մարգարյանի, Թամարա Բաղդասարյանի, Լիլիթ Ղազանչյանի, Դավիթ Վարդիկյանի, Ռուբեն Հակոբյանի և Պավել Գյուլումյանի.

գրավոր ընթացակարգով քննության առնելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 24.07.2026 թվականի թիվ ԿԳ-26126-2-Ա որոշման դեմ ներկայացված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**.

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 05.02.2026թ. տրամադրված տեղեկանքի՝ փաստաբան Դավիթ Մուրադի Իոնդեմի (արտոնագիր թիվ 533) անդամավճարի ընդհանուր պարտքը 05.02.2026թ. դրությամբ կազմել է 120.000 (հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, որից վերջին 18 ամիսների համար՝ 2024թ. հունիսից 2025թ. նոյեմբեր ամիսը ներառյալ, կազմում է 90.000 ՀՀ դրամ: Միաժամանակ վերջինս չի վճարել հերթական ամսվա անդամավճարը:

Պալատի նախագահի 23.02.2026թ. թիվ 223-Ա/ԿԳ-26126 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել Փաստաբանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետև՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետև՝ Կանոնագիրք)** 2.9.1 և 9.1.3 ենթակետերի խախտման հատկանիշներով:

Պալատի գլխավոր հաշվապահի 24.07.2026թ. տեղեկանքի համաձայն՝ Փաստաբանն ամբողջությամբ չի մարել անդամավճարի պարտքը, որն առկա է եղել կարգապահական վարույթի հարուցման պահին:

Պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև՝ Հանձնաժողով)**, 24.07.2026 թվականի թիվ ԿԳ-26126-2-Ա որոշմամբ **(այսուհետև՝ Որոշում)** Փաստաբանի նկատմամբ կիրառել է կարգապահական տույժ «փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում»՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.9.1-րդ և 9.1.3-րդ ենթակետերի խախտման համար:

Փաստաբանը Որոշման դեմ 05.08.2026թ. բողոք է ներկայացրել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ (**այսուհետև՝ Խորհուրդ**):

2. **ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի** 24.07.2026 **թվականի թիվ ԿԳ**-26126-2-**Ա որոշման էությունը**.

Հանձնաժողովը հաստատված է համարել, որ փաստաբան Դավիթ Իոնդեմը սահմանված ժամկետներում չի կատարել անդամավճարների վճարման պարտականությունը, ունեցել է առնվազն տասնութ ամսվա անդամավճարի չափով պարտք և մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման կայացումը պարտքն ամբողջությամբ չի մարել: Արդյունքում Հանձնաժողովը նրա վարքագծում արձանագրել է «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Կանոնագրքի 2.9.1 ու 9.1.3 ենթակետերի խախտումներ և նրա նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ **փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում**:

3. **Բողոքաբերի հիմնավորումները և պահանջը**.

Բողոքաբերը Հանձնաժողովի որոշման դեմ ներկայացված բողոքով խնդրել է վերացնել Հանձնաժողովի 24.07.2026 թվականի թիվ ԿԳ-26126-2-Ա որոշումը:

Բողոքաբերը, ըստ էության, ներկայացրել է հետևյալ հիմնական փաստարկները.

Բողոքաբերը նշել է, որ 2018 թվականից ընտանեկան հանգամանքներով բնակվել է ԱՄՆ-ում և մինչև 2026 թվականի հուլիսի 7-ը Հայաստանում չի գտնվել, ինչի հետևանքով տեղեկացված չի եղել իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի և դրա ընթացքի մասին:

Փաստաբանի պնդմամբ՝ 07.04.2026թ. ստացած էլեկտրոնային նամակը չի բացել, քանի որ այն ուղարկվել է իրեն անծանոթ հասցեից և չի ունեցել վերնագիր («No subject»), ուստի չի դիտարկել որպես Պալատից ստացված հաղորդագրություն:

Բողոքաբերը նաև նշել է, որ 31.07.2026թ., տեղեկանալով անդամավճարի պարտքի և Հանձնաժողովի որոշման մասին, ամբողջությամբ մարել է առկա պարտքը և վճարել նաև հաջորդ ամսվա անդամավճարը:

4. **Բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները**.

Ներկայացված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Պալատի նախագահի 23.02.2026թ. թիվ 223-Ա/ԿԳ-26126 որոշմամբ Փաստաբանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Կանոնագրքի 2.9.1 և 9.1.3 ենթակետերի խախտման հատկանիշներով:

2. 04.03.2026թ. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումն ուղարկվել է Փաստաբանի վերաբերյալ Պալատում առկա գործունեության հիմնական վայրի հասցեով: 06.03.2026թ. ուղարկվել է նաև Փաստաբանի՝ Պալատին տրամադրած էլեկտրոնային հասցեին, իսկ դրա վերաբերյալ տեղեկատվությունը 27.03.2026թ. հրապարակվել է Պալատի պաշտոնական կայքում:

3. 02.04.2026թ. Փաստաբանին առաջարկվել է ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ և բացատրություն: Նշված պահանջն 06.04.2026թ. ուղարկվել է Պալատում առկա գործունեության հիմնական վայրի հասցեով, իսկ 07.04.2026թ. նաև Փաստաբանի էլեկտրոնային հասցեին, սակայն Փաստաբանը բացատրություն չի ներկայացրել:

4. Հանձնաժողովի 28.04.2026թ. որոշմամբ կարգապահական գործն ընդունվել է վարույթ, իսկ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ որոշման հրապարակման օր է նշանակվել 24.07.2026թ.: Նշված որոշումը 30.04.2026թ. ուղարկվել է Պալատում առկա գործունեության հիմնական վայրի հասցեով, ինչպես նաև Փաստաբանի էլեկտրոնային հասցեին:

5. 24.07.2026թ. դրությամբ Փաստաբանը անդամավճարի պարտքն ամբողջությամբ չէր մարել:

6. Հանձնաժողովի 24.07.2026թ. թիվ ԿԳ-26126-2-Ա որոշմամբ Փաստաբանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

7. **Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը**.

Խորհուրդը, ուսումնասիրելով բողոքը, կարգապահական գործի նյութերը, Հանձնաժողովի որոշումը, գտնում է, որ Հանձնաժողովի որոշումը պետք է թողնել անփոփոխ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 39.11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *բողոքի քննության ժամանակ* ***խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:***

Օրենքի 39.11-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ *բողոքի քննությունից հետո խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.*

1) կարգապահական հանձնաժողովի որոշումն անփոփոխ թողնելու մասին.

2) կարգապահական հանձնաժողովի որոշումն ամբողջությամբ կամ մասնակի վերացնելու մասին:

«Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ, բացառությամբ օրենքով կամ Փաստաբանների պալատի կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.1 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:

Պալատի խորհրդի կողմից 13.01.2023**թ**. **թիվ** 2/6-**Լ որոշմամբ հաստատված «Փաստաբանի անդամավճարի, հավակնորդի, փաստաբանի օգնականի մուտքի և այլ վճարների չափերը, ինչպես նաև դրանք վճարելու» կարգի** (**այսուհետ՝ Կարգ**) 14-**րդ**

կետի համաձայն՝ *փաստաբանները յուրաքանչյուր ամսվա անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը:*

Կարգի 5-րդ կետի համաձայն՝ *փաստաբանի ամսական անդամավճարի չափը կազմում է 5.000 (հինգ հազար) ՀՀ դրամ …:*

Վերոգրյալ կարգավորումներից հետևում է, որ անդամավճար վճարելու պարտականությունը բխում է փաստաբանի՝ Պալատի անդամ լինելու հանգամանքից, իսկ այդ պարտականության կատարման ժամկետը հստակ սահմանված է: Հետևաբար, անդամավճար վճարելու պարտականությունը պայմանավորված չէ Պալատի կողմից փաստաբանին պարտքի առկայության մասին հիշեցմամբ կամ դրա կապակցությամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին ծանուցմամբ: Փաստաբանը պարտավոր է ինքնուրույն հետևել իր անդամավճարների վճարմանը և դրանք կատարել սահմանված ժամկետներում:

Սույն գործով հաստատվել է, որ 05.02.2026թ. դրությամբ Փաստաբանի անդամավճարի ընդհանուր պարտքը կազմել է 120.000 ՀՀ դրամ, որից վերջին 18 ամիսների համար՝ 90.000 ՀՀ դրամ, ինչպես նաև Փաստաբանը չի վճարել հերթական ամսվա անդամավճարը: Հաստատվել է նաև, որ Հանձնաժողովի կողմից որոշման կայացման՝ 24.07.2026թ. դրությամբ Փաստաբանը պարտքն ամբողջությամբ չէր մարել:

Խորհուրդն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև անդամավճարի վճարման պարտականության նպատակին և նշանակությանը:

Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանների պալատի գույքը ձևավորվում է, ի թիվս այլնի, փաստաբանների անդամավճարներից, իսկ անդամավճարները վճարում են Պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար:

Նշված կարգավորումից հետևում է, որ անդամավճարի վճարումը չի կարող դիտարկվել միայն որպես Պալատի և առանձին փաստաբանի միջև դրամական պարտավորություն: Այն Պալատի գործունեության գույքային ապահովման միջոցներից է և, որպես այդպիսին, անմիջականորեն կապված է Պալատի՝ օրենքով սահմանված խնդիրների իրականացման հետ:

Սույն գործով հաստատված փաստերը վկայում են անդամավճարի վճարման պարտականության տևական (24 ամիս) չկատարման մասին: Խորհրդի գնահատմամբ՝ նման տևական ժամանակահատվածում Պալատի անդամությունից բխող պարտականության չկատարումը վկայում է Պալատի անդամի պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ վերաբերմունքի մասին:

Այս պայմաններում Բողոքաբերի այն փաստարկը, որ ինքը գտնվել է Հայաստանի Հանրապետությունից դուրս և տեղեկացված չի եղել իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի մասին, չի կարող ազդեցություն ունենալ մինչև

կարգապահական վարույթ հարուցելը ձևավորված՝ անդամավճար վճարելու պարտականության և դրա չկատարման փաստի գնահատման վրա:

Անդրադառնալով Բողոքաբերի՝ կարգապահական վարույթի մասին տեղեկացված չլինելու վերաբերյալ փաստարկին՝ Խորհուրդը հարկ է համարում նշել նաև հետևյալը:

Գործի նյութերից հետևում է, որ Պալատի նախագահի՝ կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը նախ ուղարկվել է Փաստաբանի վերաբերյալ Պալատում առկա գործունեության հիմնական վայրի հասցեով, իսկ այն չստացվելուց հետո՝ նաև Փաստաբանի կողմից Պալատին տրամադրված էլեկտրոնային հասցեին: Որոշման վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվել է նաև Պալատի պաշտոնական կայքում: Այնուհետև Փաստաբանին ուղարկվել է կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ և բացատրություն ներկայացնելու պահանջը՝ ինչպես նրա գործունեության հիմնական վայրի հասցեով, այնպես էլ էլեկտրոնային եղանակով: Հանձնաժողովի կողմից կարգապահական գործը վարույթ ընդունելու և որոշման հրապարակման օր նշանակելու մասին որոշումը ևս ուղարկվել է Փաստաբանի գործունեության հիմնական վայրի և էլեկտրոնային հասցեներով:

Բողոքաբերը ևս ընդունում է իր էլեկտրոնային հասցեին Պալատից հաղորդագրություն ստանալու փաստը և նշում է, որ այն չի բացել, քանի որ նամակը չի ունեցել վերնագիր և ուղարկողի անունն իրեն ծանոթ չի եղել:

Խորհուրդն արձանագրում է, որ Փաստաբանի էլեկտրոնային հասցեին ուղարկված հաղորդագրությունը միակը չի եղել: Նախապես նրա նույն էլեկտրոնային հասցեին ուղարկվել է նաև կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը՝ Պալատի պաշտոնական էլեկտրոնային հասցեից և «Անդամավճար 2026» թեմայով: Հետագայում ևս վարույթի ընթացքին վերաբերող փաստաթղթերն ուղարկվել են նույն էլեկտրոնային հասցեին: Հետևաբար, այն հանգամանքը, որ Փաստաբանը չի բացել իր կողմից Պալատին տրամադրված էլեկտրոնային հասցեին ստացված հաղորդագրությունը կամ չի հետևել այդ հասցեով ստացվող նամակներին, չի կարող վերագրվել Պալատին և հիմք հանդիսանալ արձանագրելու, որ Փաստաբանը զրկված է եղել կարգապահական վարույթի շրջանակներում իր իրավունքներն իրացնելու հնարավորությունից:

Միաժամանակ, **հարկ է նաև նշել**, **որ Կանոնագրքի** 2.9.4 **ենթակետի համաձայն՝** փաստաբանը պարտավոր է էլեկտրոնային հասցե ունենալ և այն տրամադրել Պալատին՝ իր հետ կապ հաստատելու նպատակով:

Կանոնագրքի 3.6.3 **ենթակետի համաձայն՝** իր գործունեության հասցեն կամ հեռախոսահամարը փոխելու դեպքում փաստաբանը պարտավոր է վստահորդներին, ինչպես նաև Պալատին ողջամիտ ժամկետում տեղեկացնել իր հասցեի կամ հեռախոսահամարի մասին:

Նշված կարգավորումներից հետևում է, որ փաստաբան-Պալատ

հարաբերություններում փոխադարձ կապի ապահովման համար համապատասխան պարտականություններ սահմանված են նաև փաստաբանի համար: Մասնավորապես, փաստաբանը պարտավոր է Պալատին տրամադրել իր հետ կապ հաստատելու համար անհրաժեշտ տվյալները, իսկ դրանց փոփոխության դեպքում՝ այդ մասին ողջամիտ ժամկետում տեղեկացնել Պալատին:

Սույն դեպքում գործի նյութերից չի հետևում, որ Բողոքաբերը Պալատին տեղեկացրել է իր գործունեության հասցեի փոփոխության կամ իր հետ կապ հաստատելու համար այլ հասցե օգտագործելու անհրաժեշտության մասին: Ընդ որում, Հայաստանի Հանրապետությունից երկարատև բացակայելու հանգամանքը ինքնին չի ազատել Փաստաբանին Պալատին իր հետ կապ հաստատելու համար արդիական տվյալներ տրամադրելու պարտականությունից:

Միաժամանակ, Պալատը Փաստաբանին կարգապահական վարույթի մասին տեղեկացնելու նպատակով կիրառել է ծանուցման երեք տարբեր եղանակ՝ փոստային, էլեկտրոնային և հրապարակային, ինչը ևս վկայում է, որ Պալատի կողմից ձեռնարկվել են Փաստաբանին վարույթի մասին տեղեկացնելու համար անհրաժեշտ բոլոր միջոցները:

Խորհուրդը հարկ է համարում նաև անդրադառնալ Բողոքաբերի այն փաստարկին, որ Հանձնաժողովի որոշման մասին տեղեկանալուց հետո՝ 31.07.2026թ., ամբողջությամբ մարել է անդամավճարի պարտքը:

Օրենքի 39.10-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի և Կանոնագրքի 9.1.3 ենթակետի համաձայն՝ առնվազն տասնութ ամսվա անդամավճարի չափով պարտք ունեցող փաստաբանի կողմից հերթական ամսվա անդամավճարը չվճարելու դեպքում կարող է կիրառվել փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում, բացառությամբ այն դեպքի, երբ **մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման կայացումը փաստաբանն ամբողջությամբ վճարել է պարտքի գումարը և որոշման կայացման օրվա դրությամբ անդամավճարի գծով որևէ պարտք չունի:**

Սույն դեպքում Հանձնաժողովի որոշումը կայացվել է 24.07.2026թ., մինչդեռ Բողոքաբերի կողմից անդամավճարի պարտքն ամբողջությամբ մարվել է 31.07.2026թ.՝ Հանձնաժողովի որոշման կայացումից հետո: Հետևաբար, որոշման կայացումից հետո պարտքը մարելու հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ նշված բացառությունը կիրառելու և Հանձնաժողովի որոշումը վերացնելու համար:

Այսպիսով, Բողոքաբերի ներկայացրած փաստարկները չեն հերքում Հանձնաժողովի կողմից հաստատված խախտման փաստը և չեն հիմնավորում Հանձնաժողովի որոշումը վերացնելու անհրաժեշտությունը: Հետևաբար, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովի 24.07.2026թ. թիվ ԿԳ-26126-2-Ա որոշումը պետք է թողնել անփոփոխ, իսկ դրա դեմ ներկայացված բողոքը՝ մերժել:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին»

Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 20-րդ կետի, 39.11**-րդ հոդվածի** 8**-րդ մասի** 1**-ին կետի և ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության** 16.26**-րդ կետի պահանջներով**, **Խորհուրդը**՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի*** *24.07.2026* ***թվականի «Փաստաբան Դավիթ Մուրադի Իոնդեմին (արտոնագիր թիվ*** *533)* ***կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին» թիվ ԿԳ-****26126-2-****Ա որոշման դեմ Դավիթ Մուրադի Իոնդեմի կողմից*** *05.08.2026* ***թվականին ներկայացված բողոքը մերժել****:*

2. ***ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի*** *24.07.2026* ***թվականի թիվ ԿԳ-****26126-2-****Ա որոշումը թողնել անփոփոխ****:*

3. ***Հանձնարարել Խորհրդի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին****:*

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն ստանալու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Դավիթ Մելքոնյան**

04 սեպտեմբերի 2026թ.
թիվ ԿԳ/22-Ա
ք. Երևան